

**Սիրարփի Կարապետյան**  
*Երևանի պետական համալսարանի,  
Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի,  
ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի,  
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս,  
բանասիրական գիտությունների թեկնածու, դասախոս  
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am*

DOI: 10.53614/18294952-2022.1-104

## **ԳՐԱԲԱՐՅԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱԿԵՐՏՄԱՆ ՄԵՋ**

Բոլոր լեզուներն իրենց զարգացման ընթացքում կրում են զանազան փոփոխություններ թե՛ արտաքին և թե՛ ներքին ազդակներից: Այլ լեզուներից փոխառվող բառերը, որոնք լեզու են մուտք գործում հիմնականում գրական-գեղարվեստական ստեղծագործությունների, թարգմանությունների և այլնի միջոցով, կոչվում են արտաքին փոխառություններ, իսկ միևնույն լեզվի ավելի վաղ շրջաններից փոխառված բառերը համարվում են ներքին փոխառություններ:

Արդի հայերենի տերմինակերտման մեջ մեծ դեր ունի գրաբարը, որից ժամանակակից հայերենին անցած բազում բառեր գրաբարում հաճախ եզրույթային արժեք չեն ունեցել, սակայն արդի հայերենում արդեն հանդես են գալիս կամ միայն որպես եզրույթ, կամ նաև որպես եզրույթ՝ մեկ այլ իմաստով: Դրանք կարող են լինել մասնագիտական եզրույթներ՝ լրագրողական, իրավաբանական, արվեստին, արհեստին առնչվող, տեխնիկական եզրույթներ, ֆիզիկային առնչվող եզրույթներ, ֆինանսական եզրույթներ, լեզվաբանական, բժշկագիտական, բուսաբանական, կենդանաբանական և այլն: Սույն հոդվածում մենք ընդգրկել ենք նմանատիպ մի շարք բառեր՝ բացատրելով դրանց իմաստները գրաբարում և աշխարհաբարում: Հոդվածն արդիական է նախևառաջ նրանով, որ բա-

ռապաշարի քննությանն առնչվող ուսումնասիրությունները միշտ են լեզվաբանների ուշադրության կենտրոնում, և երկրորդ՝ այն պատճառով, որ այն նվիրված է ժամանակակից հայերենի բառապաշարի զարգացմանը, իսկ վերջինիս հարստացմանն ու կատարելագործմանը նվիրված ուսումնասիրությունները առանձնակի կարևորություն են ներկայացնում:

**Հիմնաբառեր.** գրաբար, ժամանակակից հայերեն, փոխառություն, արտաքին, ներքին, եզրույթ, բառային կազմ, բառարան, տերմինակերտում, մասնագիտական:

## Ներածություն

Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզու հարատև զարգացող համակարգ է: Այն անընդմեջ փոփոխվում է ներքին և արտաքին ազդակների շնորհիվ: «Սովորաբար գիտության որևէ ճյուղի զարգացումը ուղեկցվում է այդ ճյուղին անհրաժեշտ տերմինաբանության ստեղծմամբ և կարգավորմամբ» (Ասլանյան, 1982, էջ 167):

Լեզվի փոփոխման, դրա զարգացման կարևորագույն միջոցներից են փոխառությունները:

Սովորաբար նեղ իմաստով «փոխառություն» եզրույթով կոչում են պատմական որոշ ժամանակաշրջանում օտար տիրակալների լեզվից տիրվողների լեզվին անցած բառերը (Աղայան, 1987, էջ 624), այլ կերպ ասած՝ արտաքին փոխառությունները, որոնց կապն ակնառու է տվյալ ժողովրդի հոգևոր և նյութական մշակույթի, մարդկային քաղաքակրթությունների ու ժողովուրդների մշակութային փոխազդեցությունների պատմության հետ: Այլ լեզուներից փոխառվող բառերը հիմնականում հատկական փոխառություններ են, որոնք մուտք են գործում գրական-գեղարվեստական ստեղծագործությունների, թարգմանությունների և այլնի միջոցով (Ջահուկյան, Աղայան, Առաքելյան, Քոսյան, 1980, էջ 337): Բացի այդ՝ անընդհատ զարգանում է նաև գիտատեխնիկական տերմինաբանությունը՝ հարստանալով նորանոր բառերով ու եզրույթներով՝ կապված գիտության ու տեխնիկայի վերելքի հետ: Օտարալեզու բառարաններում «փոխառություն» բառը հաճախ սահմանվում է որպես «բառերի, քերականական կառույցների, ձևայինների, հնչույթների՝ մի լեզվից մյուսին անցնելու գործընթացը և արդյունքը, լեզվական կապերի ամենատարածված տեսակը» (Жеребнито, 2010, էջ 107): Ահա ևս մեկ սահմանում. «Փոխառությունը լեզվական տարրերի անցումն է մի լեզվից մյուսը՝ որպես լեզուների փոխազդեցության արդյունք...փոխառությունները լինում են բանավոր և գրավոր» (Прохоров, 1984, էջ 445):

Սակայն փոխառությունները կարող են անցնել լեզվին ոչ միայն այլ լեզուներից, այլև միևնույն լեզվի ավելի հին շրջաններից կամ դրա տարբերակային համակարգերից և այլն: Արդի արևելահայերենի դեպքում նման փոխառությունները կարող են անցնել գրաբարից, միջին հայերենից, ժողովրդախոսակցական լեզվից, բարբառներից, արևմտահայերենից: Այն բառերը, որոնք լեզվին փոխանցվում են նշված ճանապարհով, կոչվում են «ներքին փոխառություններ» (Ջահուկյան և համահեղինակներ, 1980, 334-335):

Հարկ է նշել, որ ժամանակակից հայերենի բառապաշարը զգալիորեն հարստացել է նաև հենց ներքին փոխառությունների շնորհիվ:

Փոփոխություն են կրել թե՛ լեզվի բառային կազմը, թե՛ բառային հիմնական ֆոնդը. վերջինս «...թեև ավելի դանդաղ, քան լեզվի բառային կազմը, ժողովրդի զարգացմանը զուգընթաց կատարելագործվում ու համալրվում է նախ իր ներքին միջոցների ընդարձակման ու ծավալման, ապա այլ լեզուներից ընդունած և յուրացրած բառերի հաշվին» (Ղազարյան, 2006, էջ 148):

Առհասարակ, յուրաքանչյուր լեզու հին որակից միայն այն ժամանակ է անցնում նոր որակի, երբ դրա հնչյունաբանության, բառային կազմի ու քերականության նոր որակի հետ կապված տարրերն աստիճանաբար կուտակվելով ու զարգանալով՝ գերակշռում են հին որակի տարրերին և ընդգրկում լեզվի հաղորդակցական գործառնությունը (Ղազարյան, 1961, էջ 83):

Գրաբարի ազդեցության քննությունը արդի արևելահայերենի բառապաշարի և տերմինաբանության վրա ենթադրում է բառապաշարի համակողմանի քննություն թե՛ ըստ բառապաշարային միավորների ծագումնաբանության, թե՛ ըստ իմաստային առանձնահատկությունների, թե՛ ըստ տերմինագործածությանն առնչվող հարցերի և այլն:

Սույն հոդվածում ընդգրկված բառերն առանձնացրել ենք ըստ գրաբարյան և արդի հայերենի հայտնի բառարանների (Աւետիքեան, Սիրմէլեան, Աւգերեան, 1836–1837; Աւգերեան, Ճէլալեան, 1865; Ղազարեան, 2004; Հովհաննիսյան, 2010; Խաչատրյան, 2016, Խմբագրական կոլեգիա (ԺՀԼԲԲ), 1969–1980, Բարսեղյան, 1973, Խաչատրյան, 2021):

### **Տեսական հիմքերը և մեթոդը**

Հարկ է նշել, որ հայերենի բառապաշարը զգալիորեն զարգանում է նաև դրա բառային կազմի մեջ տեղի ունեցող ներքին այնպիսի տեղաշարժերով, ինչպիսիք են գործառական և լեզվառձական շերտերի պատկանող բառերի փոխանցումը մի շերտից մյուսին: «Բառերի տերմինացում ասելով հասկանում ենք լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող և բառապաշարի գործառական կամ պատմական տարբեր շերտերի պատկանող բառերի օգտագործումը որևէ տերմինահամակարգի մեջ՝ համապատասխան տերմինային իմաստով» (Ջահուկյան և համահեղինակներ, 1980, էջ 153): Այսպես, օրինակ՝ *սկան, մարտկոց, սաղավարտ, ռուսք* և այլ բառերը գրաբարյան էին. դրանք հետագայում դարձան ռազմական եզրույթներ (Ջահուկյան և համահեղինակներ, 1980, 353–354): Գրաբարում սրանք համապատասխանաբար նշանակել են «*սպարի՝ գեպնի տակ փորուած անցք՝ փոս՝ գաղտնի կամ բռնի ներս մտնելու համար*» (Ղազարյան, 2004, էջ 21), «*բերդապարսպի վրայ ամրացուած և պաշտպանուած շինութիւն, որտեղից բերդապահ զօրքը կուում էր թշնամու դէմ*» (Ղազարյան, 2004, էջ 162), «*սառը գէնքի հարուածներից պաշտպանուելու համար զինուորականի մնտաղեայ գլխանոց*» (Ղազարյան, 2004, էջ 441), «*նետրելու քար, պարսաքար*» (Ղազարյան, 2004, էջ 435): Եզրույթներն արտահայտում են տարբեր հատուկ անվանումներ, որոնք կազմում են տերմինային համակարգեր: Եվ յուրաքանչյուր տերմինահամակարգ արտացոլում է

առանձին գիտությունների, գիտական ուղղությունների, հասկացությունների համակարգ, գիտելիքի տարբեր ոլորտների իրակություններ (Корниевская, 2015, էջ 234): Մարդկային գործունեության ամեն մի ոլորտ ունի եզրույթների իր համակարգը, ուստի տերմինաբանության իմացությունը կարևոր է ոչ միայն պրակտիկ գործունեությամբ, այլև անմիջականորեն գիտությամբ զբաղվողների համար (Борисова, 2015, էջ 154):

Մույն հոդվածում մենք գրաբարյան տարբեր բառարաններից դուրս ենք գրել բառային այնպիսի օրինակներ, որոնք գրաբարում տերմինային արժեք չեն ունեցել, սակայն արդի հայերենում դրանք կիրառվում են որպես եզրույթներ կամ նաև՝ որպես եզրույթներ: Մեր հոդվածի հիմքում հիմնականում ընկած է համեմատական-զուգահրակյան մեթոդը՝ գրաբարի և ժամանակակից հայերենի բառային միավորների համեմատության հիման վրա: Հոդվածում բառային միավորների քննությունն արված է թե՛ համաժամանակյա, թե՛ տարժամանակյա հայեցակետերով:

### Արդյունքները

Մեր քաղած բառային օրինակները պատկանում են տարբեր բնագավառների և առանձնացրել ենք ըստ այդմ:

#### Բուսակենդանական եզրույթներ

Բուսանունների հոմանիշների առկայությունը տարբեր բառարաններում հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ բառերի տերմինացումը դեռևս չի ավարտվել: Բազմաթիվ բառեր՝ այդ թվում նաև ածականներ, ժամանակակից հայերենում ձեռք են բերել եզրույթային իմաստ՝ որպես բուսաբանական եզրույթներ:

**Ազնիվ՝** բառը գրաբարում ունի հետևյալ իմաստները՝ 1. ած.՝ *տոհմիկ*, 2. *սրբազան*, *նվիրական*, 3. ձայնարկ.՝ *կեցցև*: Արդի հայերենում այս բառը նաև բուսաբանական եզրույթ է՝ *երիցուկի տեսակ*, *գարշահույր օշոշ*:

**Անթառամ** բառը գրաբարում նշանակել է 1. *չթառամող*, 2. *մնայուն*, *մշտադուր*, իսկ արդի հայերենում այն նաև բուսաբանական եզրույթ է և նշանակում է *բարդածաղկավորների ընտանիքին պատկանող բույս՝ մանր գնդաձև ծաղիկների փնջերով, անմեռուկ*:

**Թունաթափ՝** գրաբարում՝ *թունաթափ լինել՝ զայրույթը, թույնը թափել մեկի վրա*: Այժմ արձանագրվում է նաև որպես *բուսաբանական եզրույթ՝ շնախույր*:

**Խաչափայր՝** գրաբարում՝ *այն խաչը, որի վրա խաչեցին Քրիստոսին*: Հայերենում նաև բուսաբանական եզրույթ է՝ *քաջվարդ*:

**Կարմրիկ՝** գրաբարում՝ 1. ած.՝ *Կարմիր գունանվան փաղաքշական ձևը*, 2. Արդի հայերենում կենդանատեսակի անուն է՝ *կարմրուկների ցեղին պարկանող գեղեցիկ փոքր միջապր՝ թևերին կարմիր ծածկույթներով*:

**Համասպիյուռ** բառը գրաբարում ունի հետևյալ իմաստները՝ 1.ած.՝ *ամեն*

1 Բուսանունների եզրույթների բացատրությունների համար բացի վերոնշյալ բառարաններից՝ հիմք է ծառայել նաև Ռ. Ղազարյանի Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն բառարանը (Եր., 1981):

յրեղ սփռված, փարածված լինելը, ցրիվ, 2. մակբ.՝ *ամենուրեք սփռվելով, փարածվելով*, իսկ արդի հայերենում նաև բուսաբանական եզրույթ է՝ *մեխակների ընտանիքին պատկանող ծաղկի անուն*:

**Հիր**՝ գրաբարում 1. ած.՝ *երկնագույն կապույտ*, 2. նույն գույնի զգեստ: Արձանագրված է նաև որպես բույսի անուն՝ *եռագույն մանուշակ*:

**Ճղեմ**՝ գրաբարում բայ՝ *ձագերի նման ճովողել* (անկատար ներկան՝ *ձղել* բայի): Արդի հայերենում նաև բույսի անուն է՝ *կնյուն*:

**Մոլի**՝ գրաբարում 1. ած.՝ *կապույտի*, 2. *դիվահար*, 3. *բուռն*, *սաստիկ*: Արդի հայերենում նաև բուսաբանական եզրույթ է՝ *ոսկեսխորո*:

### Բժշկագիտական եզրույթներ

Բժշկագիտական եզրույթները հիմնականում կապված են հիվանդությունների անվանումների, բուժումների, ախտորոշումների և այլնի հետ: Այս բառերից շատերը ևս ներքին փոխառություններ են, այսինքն՝ գալիս են մեր լեզվի զարգացման նախորդ շրջաններից:

ա. **Ախտակիր** բառը գրաբարում նշանակել է առհասարակ *ախտի ենթարկված, ախտաժեպ*, իսկ արդի հայերենում այն բժշկական եզրույթ է՝ 1. *ախտավոր, հիվանդ, ախտաժեպ, ցավագար, ախտացյալ*, 2. *ախտաբեր, ախտածին, հիվանդաբեր, հիվանդարար, ախտահարույց, ախտավարակ* իմաստներով:

բ. **Ախտասպան**՝ գրաբարում պարզապես նշանակել է *ախտերը զուրկ, սպանող*, իսկ արդի հայերենում այն բժշկական եզրույթ է՝ *ածական՝ ախտերը՝ հիվանդությունները ոչնչացնող*:

գ. **Ճառագայթում (ն)**՝ գրաբարում նշանակել է *ճառագայթ, լույս, փայլ*, իսկ արդի հայերենում նաև բժշկագիտական եզրույթ է՝ 1. *ճառագայթելը, ճառագայթվելը*, 2. *ճառագայթով գոյացությունն այրելը*:

Պետք է նշել, որ բժշկագիտական եզրույթներից շատերը նաև քիմիայի և կենսաբանության ոլորտների բառեր են, քանի որ բժշկագիտությունը, քիմիան և կենսաբանությունն անքակտելիորեն կապված են իրար հետ (Օհանյան, 1982, էջ 70):

### Լեզվաբանական եզրույթներ

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում լեզվաբանական եզրույթները: Այսպես՝ **ձայնարկություն** բառը գրաբարում նշանակել է *բարձր ձայնել, բացականչություն*, արդի հայերենում՝ 1. *ձայնարկելը*: 2. *ձայնարկուի լաց՝ ողբ*: Միննույն ժամանակ այն քերականագիտական եզրույթ է և նշանակում է *խոսքի մաս, որին պատկանում են զգացմունք՝ հույզ՝ կոչ և նմանաձայնություն արտահայտող բառերը*:

**Անբուն**՝ գրաբարում ած.՝ *ոչ բնական*: Այժմ նաև լեզվաբանական եզրույթ է՝ *անսարմար հիմքերով կազմվող խոնարհման փիպ*:

**Անծորդ** բառը նշանակել է *լծակից, ընկեր, ամուսին չունեցող*, իսկ արդի հայերենում այն լեզվաբանական եզրույթ է՝ *լծորդի ձայնավոր չունեցող իմաստով*:

**Բարդություն**<sup>1</sup> գրաբարում՝ *բարդելը, կուրակվելը*: Արդի հայերենում նաև քերականագիտական եզրույթ է՝ *բառակազմության տեսակ*:

**Խառնուրդ**<sup>2</sup> գրաբարում՝ 1. *Կցորդություն, միաբանություն*, 2. *Բանականների ընդհարվելը*: 3. *Գեյրերի խառնվելը*: Այժմ նաև լեզվագիտական եզրույթ է՝ *բաղարկություն*:

### Ֆինանսական եզրույթներ

Պակաս հետաքրքիր չեն նաև այն բառերը, որոնք եզրույթային իմաստ են ձեռք բերել ֆինանսաբանական համակարգում և լայն կիրառություն ունեն ժամանակակից աշխարհում: Բերենք մի քանի օրինակ՝

**գումար** բառը գրաբարում նշանակել է *խումբ, խմբվելը, հավաքված բազմություն*, իսկ արդի հայերենում այն նաև մաթեմատիկական և ֆինանսական եզրույթ է. 1. *երկու կամ ավելի թվերի գումարումից սրացված քանակ*, 2. *որևէ բանի ընդհանուր քանակություն*, 3. *դրամի որոշ քանակություն* իմաստներով:

**Խնդիր**<sup>3</sup> գրաբարում՝ 1. *փնտրելը, որոնելը*, 2. *հարցում, բացատրություն*, 3. *խնդրանք*: Արդի հայերենում նաև եզրույթ է՝ *առաջադրանք*:

**Կուրորակ**<sup>4</sup> գրաբարում՝ *կրոր, պարար*: Արդի հայերենում մաթեմատիկական եզրույթ է՝ *ամբողջի որևէ մասը*<sup>2</sup>:

**Հարթություն**<sup>5</sup> գրաբարում՝ 1. *հարթ լինելը*, 2. *հավասարություն, համաչափություն*, 3. *համաձայնություն, միաբանություն*, 4. *մեղմություն, ցածրություն*: Արդի հայերենում նաև մաթեմատիկական եզրույթ է՝ *երկու չափում ունեցող մակերես*:

**Մեծություն**<sup>6</sup> գրաբարում՝ 1. *մեծ լինելը, ճոխություն*, 2. *հարստություն*, 3. *մեծամտություն, հպարտություն*: Արդի հայերենում նաև մաթեմատիկական եզրույթ է՝ *չափ, ծավալ*:

### Ֆիզիկային առնչվող եզրույթներ

Ֆիզիկային վերաբերող տարբեր եզրույթներ կարող են հանդիպել բնականաբար նախևառաջ ֆիզիկայի դասագրքերում: Դրանք առաջին հայացքից սովորական բառեր են, սակայն մասնագիտական բառապաշարում բոլորովին այլ իմաստ են արտահայտում: Դիտարկենք որոշ բառեր, որոնք մեր լեզվի զարգացման ավելի հին շրջանում այլ իմաստներ են ունեցել.

**հզորություն**<sup>7</sup>–գրբ.՝ *հզոր լինելը, քաջություն, արիություն*, արդի հայերենում այն նաև ֆիզիկային առնչվող եզրույթ է 1. *աշխատանքի և դրա կատարման ժամանակի հարաբերությունը ցույց տվող մեծություն, կարողություն* իմաստով:

**Արագություն**<sup>8</sup>–գրաբարում՝ *շարժման արագ լինելը*: Արդի հայերենում նաև ֆիզիկայի և տեխնիկայի եզրույթ է՝ *շարժման կամ գործողության արագ լինելը*, 2. *որևէ բանի շարժման կամ տարածման աստիճանը*, 3. *տեխնիկա՝ ավտոմոբիլի՝ տրակտորի ևն քաշող ուժի փոփոխվող մեծությունը*, 4. *ֆիզիկա՝*

<sup>2</sup> Նշանակում է նաև կապարե մանրագնդակ:

առարկայի անցած տարածության և դրա համար սպառված ժամանակի հարաբերությունը:

**Ճնշում (ս)**– գրաբարում՝ *ճնշելը*: Արդի հայերենում այն ֆիզիկայի եզրույթ է՝ *զազերի ու հեղուկների առաձգականության աստիճանը*: Ոչ եզրույթային իմաստով *ճնշում* բառն ունի բոլորիս հայտնի «*ազդեցություն*», «*ներգործություն*» իմաստները:

**Լիցք** բառը գրաբարում նշանակել է *վեգ, ճան*: Արդի հայերենում այն ունի հետևյալ իմաստները՝ 1. *գործվածքի փոքրիկ պայտվածքը համապատասխան թելով լցնելը*: 2. *պարի հիմքի՝ գեպնի մեջ փորված խրամի մեջ լցվող շինանյութը, նաև ֆիզիկայի եզրույթ է՝ որևէ մարմնի մեջ եղող էլեկտրականություն և դրա քանակը*: Ի դեպ, այս բառը ժամանակակից հայերենում նաև սպորտի բնագավառի եզրույթ է՝ *մարմնի կենսագործունեությունը բարձրացնելու համար կատարվող մարմնամարզական վարժանքների ամբողջությունը* իմաստով:

### Տեխնիկական եզրույթներ

**Շարժիչ**՝ գրաբարում՝ *շարժող*: Արդի հայերենում այն ոչ միայն նշանակում է *շարժող, առաջ մղող*, այլ նաև տեխնիկական եզրույթ է՝ *էներգիայի որևէ տեսակը մեխանիկական ուժի փոխարկող մեքենա* իմաստով:

**Բարձիչ**՝ գրաբարում՝ բարձրացնող, արդի հայերենում այն նաև եզրույթ է՝ *տեխնիկական ծանրություն բարձրացնող մեքենա* իմաստով:

Այժմ տեխնիկական եզրույթների քանակը գնալով մեծանում է՝ պայմանավորված տեխնիկայի արագ զարգացմամբ, տեխնիկական գյուտերի և նորարարությունների՝ մեր կյանք ներթափանցմամբ:

### Մասնագիտական տարբեր եզրույթներ

Գիտության ոլորտում գործածվող բառերը կարևոր դեր են կատարում գիտական հաղորդակցման ու տեղեկատվության փոխանակման բնագավառում, և դրանց թիվը գնալով մեծանում է՝ կապված գիտության հետագա զարգացման և առաջընթացի հետ (Օհանյան, 1982, էջ 236):

Հասարակական ամենատարբեր ոլորտներում նոր մասնագիտությունների, զբաղմունքների առաջացման և զարգացման հետ կապված՝ առաջ են գալիս նոր հասկացություններ, որոնք բնականորեն լեզվում պետք է անվանվեն այս կամ այն կերպ, ուստի դրանք անվանելու համար մեր լեզուն կան օգտագործում է սեփական միջոցները՝ նոր իմաստով կիրառելով լեզվի ավելի հին շրջանում արդեն իսկ գոյություն ունեցող բառը, կամ բառեր է փոխառում այլ լեզուներից:

**Լրագրողական, իրավաբանական եզրույթներ.** այսպես՝ *հաղորդում (ս)* բառը գրաբարում ունի *հաղորդություն ընդունել* իմաստը, իսկ արդի արևելահայերենում այն նաև գիտական և մասնագիտական եզրույթ է՝ հետևյալ իմաստներով՝ 1. *այն, ինչ հաղորդվում է ռադիոյով և հեռուստատեսությամբ*:

յամբ, հաղորդումների ծրագիր, 2. որևէ մեկի կողմից հաղորդվող տվյալներ՝ տեղեկություններ ևն: Այն ունի նաև հետևյալ նշանակությունները՝ 1. օդերևութաբանական կայանի հաղորդում, 2. գիտական համառոտ զեկուցում որևէ բանի մասին:

**Հաշտարար** բառը գրաբարում նշանակել է *հաշտություն կայացնող, բարեխոս, միջնորդ*, իսկ արդի հայերենում այն նաև իրավական եզրույթ է՝ վիճելի գործերը վարող պետական պաշտոնյա իմաստով:

**Արհեստին** առնչվող եզրույթներից է՝ **մաշկագործ**՝ գրաբարում՝ *մաշկից պարրաստված, մաշկեղեն, կաշվե*: Արդի հայերենում *մասնագիտական եզրույթ է՝ կաշեգործ*:

Հարկ է նշել, որ վերոնշյալ եզրույթներից շատերը դարձել են լայն գործածելի, իսկ շատ բառեր էլ դեռևս գործածության բարձր հաճախականություն չունեն և լայնորեն չեն կիրառվում:

## Քննարկում

Այսպիսով, յուրաքանչյուր լեզվի զարգացումն անընդհատական և շարունակական երևույթ է: Արտաքին և ներքին ազդակներն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում այս կամ այն լեզվի վրա: Այս առումով, ինչպես տեսնում ենք, մեծ է գրաբարի ունեցած ազդեցությունն արդի արևելահայերենի բառապաշարի և տերմինակերտման հարցում: Ընդ որում գրաբարյան բառերով հարստացել են արդի հայերենի ամենատարբեր ոլորտների տերմինահամակարգերը: Իհարկե, մեկ հողվածի շրջանակներում անհնար է ներկայացնել գրաբարյան բառապաշարից արդի հայերենին անցած բոլոր այն բառերը, որոնք ձեռք են բերել եզրույթի արժեք, սակայն մեր համոզմամբ մեր այս հետազոտությունը կարող է մեկնարկ հանդիսանալ տերմինակերտման բնագավառին նվիրված հետագա մի շարք այլ հետազոտությունների համար:

## Եզրակացություն

Ակնհայտ է, որ մեր լեզվի գրաբարյան շրջանը կարևոր դեր է կատարել և այժմ էլ շարունակում է կատարել մասնագիտական տարբեր բնագավառների տերմինակերտման մեջ: Գրաբարի ազդեցությունը ժամանակակից հայերենի վրա դրսևորվում է ոչ միայն բառային միավորներ տրամադրելու, այլև մեր լեզվի բառակազմական եղանակներով ու միջոցներով մասնագիտական նոր եզրույթներ կերտելու մեծ հնարավորություններ ստեղծելու մեջ: Ինչպես նշել ենք վերևում, մեր բերած բառերը գրաբարից արդի հայերենի բառապաշարին փոխանցված և եզրույթային արժեք ձեռք բերած բառերի միայն որոշ մասն են կազմում: Նմանատիպ բառերի թե՛ համաժամանակյա և թե՛ տարժամանակյա քննությունը հնարավորություն է ընձեռում մեզ՝ ծանոթանալու բառային իմաստների՝ մեր լեզվի շրջանակներում կատարված նմանօրինակ տարբեր փոփոխություններին և անցումներին:



## Օգտագործված գրականության ցանկ

- Աղայան Է. (1976) *Արդի հայերենի բացարական բառարան՝ երկու մասով*, Եր., «Հայաստան» հրատ.:
- Աղայան, Է. (1987) *Լեզվաբանության հիմունքներ*, Եր., Երևանի համալս. հրատ.:
- Ասլանյան Ա. (1982) Տերմինակազմության աղբյուրները հայերենում, *Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիրության և տերմինաբանության*, էջ 149–236, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
- Ազերեան, Մ., Ճլալեան, Գր. (1865) *Առձեռն բառարան հայկազեան լեզուի*, Վենետիկ, Սուրբ Ղազար:
- Աետիքեան, Գ., Սիրմելեան, Խ., Ազերեան, Մ. (1836–1837) *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 1–2, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու:
- [https://lingvistics\\_dictionary.academic.ru/?f=0LDQvdGC0LA%3D&t=0LDRgNCz0L4%3D&nt](https://lingvistics_dictionary.academic.ru/?f=0LDQvdGC0LA%3D&t=0LDRgNCz0L4%3D&nt)
- Բարսեղյան, Հ. (1973) *Հայերեն ուղղագրական–ուղղախոսական–տերմինաբանական բառարան*, Եր., «Լոյս» հրատ.:
- Ժամանակակից հայոց լեզվի բացարական բառարան* (ԺՀԼԲԲ), (1969, 1972, 1974, 1980), հ. 1–4, Եր., Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
- Խաչատրյան, Լ. (2016) *Գրաբարի ուսումնական բառարան*, Վենետիկ, Սուրբ Ղազար:
- Խաչատրյան, Լ. (2021) *Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան*, Երևան, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ.:
- Հովհաննիսյան Լ. (2010) *Գրաբարի բառարան. Նոր հայկազեան բառարանում չվկայված բառեր*, Եր., «Էդիտ Պրինտ» հրատ.:
- Ղազարեան Ռ. (2000) *Գրաբարի բառարան*, Երևանի համալս. հրատ., Երևան:
- Ղազարյան Ռ. (1981) *Բուսանունների հայերեն–լատիներեն–ռուսերեն–անգլերեն–ֆրանսերեն բառարան*, Եր., Երևանի համալս. հրատ.:
- Ղազարյան Ս. (1961) *Հայոց գրական լեզվի պատմություն*, հատոր II, Եր., Հայպետհրատ:
- Ղազարյան Ս. (2006) *Հայոց լեզվի համառոտ պատմություն*, Եր., Երևանի համալս. հրատ.:
- Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ. (1980) *Հայոց լեզու*, I մաս, Ա պրակ (Ներածություն, հնչյունաբանություն, բառագիրություն, դարձվածաբանություն), Եր., Երևանի համալս. հրատ.:
- Օհանյան Հ. (1982) *Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրանց հարստացման միջոցները*, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
- Борисова М. (2015) Терминология и терминосистема: аспекты корреляции, *Университетские чтения, Сборник материалов научно-методических чтений ПГЛУ*, Пятигорск, ч. 5, стр. 154–157. [https://upload.pgu.ru/iblock/d0d/ch\\_05\\_sim\\_1\\_sektsii\\_11\\_14-m.k.-borisova-28.pdf](https://upload.pgu.ru/iblock/d0d/ch_05_sim_1_sektsii_11_14-m.k.-borisova-28.pdf)
- Жеребило Т. (2010) *Словарь лингвистических терминов*, изд. 5–е, Назрань, изд.–во «Пилигрим».
- Корниевская Т. (2015) Термин как объект исследования в лингвистике, *Историческая и социально-образовательная мысль*, К., т. 7. N 5, ч. 1., стр. 234 – 237.
- Прохоров А. (гл. ред.) (1984), *Советский энциклопедический словарь*, изд. 3–е, Москва, «Советская энциклопедия».

## References

- Aghayan, E. (1976) *Ardi hayereni batsatrankan bararan [Explanatory dictionary of modern Armenian] – erku masov*, Yerevan, “Hayastan” hrat.
- Aghayan, E. (1987) *Lezvabanutyany himunqner [Fundamentals of Linguistics]*, Yerevan, Surb Ghazar.
- Aslanyan, A. (1982) Terminakazmutyan aghbyunery hayerenum [Terminology sources in Armenian], *Aknarkner zhamanakacic hayots lezvi baragitutyany ev terminabanutyany*, ej. 149–236, Yerevan, HSSH GA hrat.
- Avgerean, M., Chelalean, Gr., (1865) *Ardzern bararan haykazeany lezui [Hand dictionary of the Haikazian language]*, Venetik, Surb Ghazar.
- Avetikean G., Surmelian Kh., Avgerean M. (1836–1837) *Nor bargirg haykazeany lezui [A new dictionary of the Haikazian language]*, h. 1–2, Venetik, Tparan i Srboyn Ghazaru. [https://lingvistics\\_dictionary.academic.ru/?f=0LDQvdGC0LA%3D&t=0LDRgNCz0L4%3D&nt](https://lingvistics_dictionary.academic.ru/?f=0LDQvdGC0LA%3D&t=0LDRgNCz0L4%3D&nt)
- Barseghyan, H. (1973) Hayeren ughghagrakan–ughghaxosakan–terminabanakan bararan [*Armenian orthographic–terminological dictionary*], Yerevan, “Luys” hrat.
- Zhamanakakits hayots lezvi batsatrankan bararan [Explanatory dictionary of modern Armenian language] (ZHHLBB), (1969–1980), h. 1–4, Yerevan, HSSH GA hrat.
- Khachatryan, L. (2016) *Grabari usumnakan bararan [Old Armenian educational dictionary]*, Venetik, Surb Ghazar.
- Khachartyan, L. (2021) *Lezvabanakan terminneri usumnakan bararan [An educational dictionary of linguistic terms]*, Yerevan, HH GAA “Gitutyun” hrat.
- Hovhannisyany, L. (2010) *Grabari bararan; Nor Haykazeany bararanum chvkayvats barer [Old Armenian dictionary. Words not found in the new Haikazian dictionary]*, Yerevan. “Edit Print” hrat.
- Ghazaryany, R. (2000) *Grabari bararan [Old Armenian dictionary]*, Yerevan, Yerevani hamals. hrat..
- Ghazaryany, R. (1981) *Busanunneri hayeren–latineren–rruseren–angleren–franserens barraran [Armenian–Latin–Russian–English–French dictionary of plant names]*, Yerevan, Yerevani hamals. hrat.
- Ghazaryany, S. (1961) *Hayots grakan lezvi patmutyany [History of the Armenian literary language]*, hator II, Yerevan, Haypethrat.
- Ghazaryany, S. (2006) *Hayots lezvi hamarot patmutyany [A brief history of the Armenian language]*, Yerevan, Yerevani hamals. hrat.
- Jahukyan, G., Aghayan, E., Araqelyany, V., Qosyan V. (1980) *Hayots lezu [Armenian language]*, I mas, A prak (Neratsutyany, Hnchyunabanutyany, baragitutyany, dardzvatsabanutyany), Yerevan, Yerevani hamals. hrat.
- Ohanyany, H. (1982) *Zhamanakakic hayots lezvi barapashary ev nra harstatsman mijocnery [Vocabulary of the modern Armenian language and means of their enrichment]*, Yerevan, HSSH GA hrat.
- Borisova, M. (2015) Terminologiya i terminosistema; aspekti korrelatsii [Terminology and terminological system: aspects of correlation], Universitetskiye chteniya, *Sbornik materialov nauchno–metodicheskikh chteniy PGLU*, Pyatigorsk, 2015, ch. 5, str. 157–157. [https://upload.pgu.ru/iblock/d0d/ch\\_05\\_sim\\_1\\_](https://upload.pgu.ru/iblock/d0d/ch_05_sim_1_)

seksii\_11\_14-m.k.-borisova-28.pdf

Zherebilo, T. (2010) *Slovar lingvisticheskikh terminov* [Dictionary of linguistic terms], izd. 5-e, Nazran, izd.-vo "Piligrim".

Kornievskaya, T. (2015) Termin kak obyekt issledovaniya v lingvistike [The term as an object of study in linguistics]. *Istoricheskaya i socialnoe-obrazovatel'naya misl*, K., t. 7, N 5, ch. 1, str. 234–237.

Prokhorov, A. (gl. red.) (1984) *Sovetskiy entsiklopedicheskiy slovar* [Soviet Encyclopedic Dictionary], izd. 3-e, Moskva, "Sovetskaya entsiklopediya".

**Տիրարփի Կարապետյան**

*Преподаватель Ереванского государственного университета,  
Армянского педагогического университета им. Х. Абовяна,  
Международного научно-образовательного центра НАН РА,  
Международного университета Евразия, кандидат филологических наук  
Эл. адрес: sirarpikarapetyan@ysu.am*

## **РОЛЬ ЗАИМСТВОВАНИЙ ИЗ ГРАБАРА (ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА) В ФОРМИРОВАНИИ СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ТЕРМИНОЛОГИИ**

Все языки в процессе своего развития претерпевают как внешние, так и внутренние изменения. Заимствования, поступающие в язык главным образом через литературные произведения, переводы и т. п., называются внешними заимствованиями, а слова, заимствованные из более ранних периодов того же языка, — внутренними заимствованиями. Древнеармянский язык (грабар) имеет большую роль в формировании терминологии современного армянского языка. Многочисленные слова, перешедшие в современный армянский язык из древнеармянского, часто не имели терминологического значения в древнеармянском. Напротив, в современном армянском они уже выступают либо только с подобным значением, как термин, или же получают еще и другое значение. Это могут быть профессиональные термины: публицистические, юридические, технические, финансовые, лингвистические, медицинские, ботанические, зоологические, а также термины из области искусства, ремесел, физики и др. В этой статье мы включили ряд похожих слов, пояснив их значение в древнеармянском и современном армянском языках. Актуальность статьи заключается, во-первых, в том, что исследования, связанные с изучением лексики, всегда находятся в центре внимания лингвистов, а во-вторых, что она посвящена развитию современной армянской лексики. Исследования же, посвященные ее обогащению и совершенствованию, имеют особую важность.

**Ключевые слова:** грабар (древнеармянский), современный армянский, заимствование, внешнее, внутреннее, термин, лексический запас, словарь, формирование терминов, профессиональный.

**Sirarpi Karapetyan**

*Lecturer at Yerevan State University,  
Armenian State Pedagogical University after Kh. Abovian,  
International Scientific-Educational Center of NAS RA,  
Eurasia International University, Ph.D. in Philology  
Email: sirarpikarapetyan@ysu.am*

## **THE ROLE OF GRABAR (OLD ARMENIAN) BORROWINGS IN CONTEMPORARY ARMENIAN TERM-FORMATION**

All languages undergo various changes during their development, both under external and internal influences. Words borrowed from other languages, which enter the language mainly through literary works, translations, etc., are called external borrowings, whereas the ones borrowed from earlier periods of the same language are considered internal borrowings.

Grabar has played a big role in the term-formation of Contemporary Armenian; many words which passed from Grabar to Contemporary Armenian often had no term value in Old Armenian, but in Contemporary Armenian they already appear either only as a term or also as a term in another sense. These can be professional terms: journalistic, legal, art, craft, technical terms, terms related to physics, financial terms, linguistic, medical, botanical, zoological, etc. In the given article we have included a number of words of this kind by explaining their meanings in Old Armenian (Grabar) and Contemporary Armenian. The article is relevant, first of all, because studies on vocabulary examination are always in the focus of linguists' attention, and secondly, because it is dedicated to the development of Contemporary Armenian vocabulary, and studies devoted to its enrichment and perfection are of particular importance.

**Keywords;** Grabar (Old Armenian), Contemporary Armenian, borrowing, external, internal, term, word-stock, dictionary, term-creation, professional.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2022թ. ապրիլի 21-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2022թ. ապրիլի 27-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2022թ. մայիսի 10-ին: